# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6, Հեռ. (0222) 57070 ,
ptghni.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 135
*17 ապրիլ 2020թ.*

***Հարգելի պարոն մարզպետ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի N 18-24 որոշումները:
Առդիր 7 ֆայլ:

17-Apr-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՐՏԻ 2020թվականի N 18

### ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ»14/02/2020թ. N ԱS-14022020-07-0360 տեղեկանքը, համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 12-ի N 15 որոշումը և քաղաքացի Վարսիկ Հայկազի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Կոտայքի մարզի Պտղնի համայնքի և քաղաքացի Վարսիկ Հայկազի Գրիգորյանի միջև 17.12.2019 թվականին կնքված և Հայաստանի Հանրապետության «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտար Տաթև Վարուժանի Ղուկասյանի կողմից վավերացված, գրանցամատյանում 8688 համարով գրանցված հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ այդ նպատակով կնքելով վերոնշյալ պայմանագրի լուծման մասին համապատասխան համաձայնագիր:
2. Պայմանագրի լուծման համաձայնագրի կնքումից հետո սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագրով օտարված անշարժ գույքի դիմաց Վարսիկ Հայկազի Գրիգորյանի կողմից վճարված գումարը (4524000 ՀՀդրամ) վերադարձնել վերջինիս՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և նախատեսված ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18-Mar-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. մարտի 18
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՐՏԻ 2020թվականի N 18

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված «Գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ»14/02/2020թ. N ԱՏ-14022020-07-0360 տեղեկանքը, համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 12-ի N 15 որոշումը և քաղաքացի Վարսիկ Հայկազի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Կոտայքի մարզի Պտղնի համայնքի և քաղաքացի Վարսիկ Հայկազի Գրիգորյանի միջև 17.12.2019 թվականին կնքված և Հայաստանի Հանրապետության «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտար Տաթև Վարուժանի Ղուկասյանի կողմից վավերացված, գրանցամատյանում 8688 համարով գրանցված հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ այդ նպատակով կնքելով վերոնշյալ պայմանագրի լուծման մասին համապատասխան համաձայնագիր:
2. Պայմանագրի լուծման համաձայնագրի կնքումից հետո սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագրով օտարված անշարժ գույքի դիմաց Վարսիկ Հայկազի Գրիգորյանի կողմից վճարված գումարը (4524000 ՀՀդրամ) վերադարձնել վերջինիս՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և նախատեսված ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18-Mar-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. մարտի 18
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՐՏԻ 2020թվականի N 20

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 5-Ն և 2020 թվականի մարտի 12-ի «Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 12-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2020 թվականի մարտի 25-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24-Mar-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. մարտի 24
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՐՏԻ 2020թվականի N 21

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սահակ Էմսարի Խանգելդյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել ժառանգության իրավունքով Հասմիկ Էմիսարի Խանգալտյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0126-0025) 1994-1996 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի տունը, օժանդակ կառույցը, ջրավազանը, պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Հասմիկ Էմիսարի Խանգալտյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1994-1996 թվականներին ինքնակամ կառուցվել է 104.34 քմ մակերեսով բնակելի տուն, 3.18 քմ մակերեսով օժանդակ կառույց, 11.0 քմ մակերեսով ջրավազան և 3.36 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հասմիկ Էմիսարի Խանգալտյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Հասմիկ Էմիսարի Խանգալտյանին ժառանգության իրավունքով պատկանող 104.34 քմ մակերեսով բնակելի տունը, 3.18 քմ մակերեսով օժանդակ կառույցը, 11.0 քմ մակերեսով ջրավազանը և 3.36 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը,

ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի  գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման  օրվանից:

24-Mar-20

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. մարտի 24
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 22

## «ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ-ԻՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի՛Ն մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով «Ճանապարհ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Կարեն Բեզոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Ճանապարհ» ՍՊԸ-ին կատարել ՍՊԸ տանող դաշտային ճանապարհի բարեկարգման և հողային, մասնավորապես հողահարթեցման, հողալցման և քարհավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

07-Apr-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. ապրիլի 07
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 23

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԵՎ «ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 15-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի ապրիլի 22-ին Պտղնիի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում» և «Մշակույթային դահլիճի վերանորոգում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում» և «Մշակույթային դահլիճի վերանորոգում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ Գայանե Սուրենի Բելլույանին:

4. Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Տարիելի Պետրոսյանին՝

1) Համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում» և «Մշակույթային դահլիճի վերանորոգում» ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

07-Apr-20

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. ապրիլի 07
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության  Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 24

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»  օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ  կետի և  Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման  պահանջների,  հիմք ընդունելով ԱՁ Հակոբ Վիրաբյանի  կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. ԱՁ Հակոբ Վիրայանին  տալ  իրեն պատկանող 1-ին փողոց թիվ  4 և 1-ին փողոց թիվ 25 հասցեներում գտնվող խանութներում  ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

13-Apr-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. ապրիլի 13
գ.Պտղնի